

խցակցութեան եւ կրօնաւորական ժուժկալութեան եւ այլ ամենայն դործոց : Եւ ի մէջ նոցա շրջելով եւ հարցանելով եւ տեսանելով տեղեկանայր ամենայնի եւ սմին այսմիկ ինքն տէր Մովսէս՝ թէպէտ անհոգ եւ անխոյժ էր , այլ տնօրինիչ սուրբ Հոգին՝ յածեալ շրջեցուցանէր ի մէջ այսպիսի կրօնաւորական կարգաց առ ի ուսուցանել զնա , վասն ապագայից ժամանակաց՝ որպէս եւ պիտոյացաւ ի ժամանակս կարգադրութեան Մեծ Անապատին» :

Գրիգոր Կեսարացի կը վերադառնայ Կ. Պոլիս , ուր 1611ին երրորդ անգամ ձեռք կը բերէ պատրիարքական աթոռը . իսկ Մովսէս կը մնայ Երուսաղէմ , ուր կը կարգուի «լուսարար սուրբ Յարութեանն» (Ա.Ռ. 286) : Այս առթիւ սորվեցաւ Մովսէս մոմ սպիտակացնելու արուեստը , որ այնքան նպաստեց ապա պայծառացնելու իր բախտը : Կը գրէ Դաւրիժեցի , թէ Մովսէս հրաման կ'ընդունի այս միջոցին Գրիգոր Պարոնտէրէն , «որ էր առաջնորդ Ս. Յակոբայ» երթալու «ի նուիրակութիւն վասն Երուսաղէմի եւ զբազում արդիւնս ժողովեալ ի քրիստոնէից՝ երեք յԵրուսաղէմ առաջի Գրիգոր եպիսկոպոսի»¹¹ :

Երբ Երուսաղէմ էր Մովսէս , հոն կը գտնուէին տակաւին Սարգիս Սաղմոսավանքի հրաժարեալ եպիսկոպոսն եւ տէր Կիրակոս

¹¹ Ա.Ռ. Դաւր. , էջ 286 : Գրիգոր տակաւին չէր ձեռնադրուած եպիսկոպոս . տե՛ս վարը :